չեն կամենում կապել Մ. Աթոռի հետ, որ ըստ ամենայնի իրաւունք ունի պահանջելու, որ այդ հրատարակութիւնը կատարուի իւր պատերի մէջ։ Գրերի ստեղծող մեծ Մարդը Էջմիածնի զաւակ, Պատմագիրների հրատարակութեան գործը յղացող Մ. Աթոռի ճեմարանի սան, գործը սրբագործուած և կազմակերպուած Ս. Էջմիածնի Գահակալի կոնդակով, հրատարակութիւնը սկսուած Մ. Աթոռի միաբաններից մէկի ձեռքով, հրատարակութեան համար աշխատող ոյժերն՝ ամենքն ևս առանց բացառութեան Ս. Էջմիածնի շնորհը վայելած և նորան պարտական անձինք, մի խօսքով բոլոր Էջմիածնինը և... և հրատարակութիւնը ոչ նորա անուան հետ կապուած։

Եթէ խնդիրն այն է, որ Մ. Աթոռի տպարանը անկարող է առ այժմ տալ այդպիսի գիտական հրատարակութիւններ՝ սխալ է, որովհետև վերջին տարիներս այն տեղից դուրս են եկել այնպիսի գիտական հրատարակութիւններ, որ ոչ մի այլ տպարանից յետ չեն մնում. օրին. Աճառեանի բառարանը, Ֆինկի վերջին աշխատութիւնը և այլն. եթէ կարող ձեռքերի պակասութիւն՝ այդ ևս չեն կարող ասել, որովհետև բոլոր այժերն այն տեղից է վերցրած և Մայր Աթոռի ձեռագրատան բոլոր ձեռագիրները դրուած են նոցա տրամադրութեան տակ, մի բան, որ ոչ մի տեղ չէին գտնի։ Ուրեմն այլ ևս ինչ պատճառ։ Լոկ միայն այն, որ յղացող անձը Տփխիս է գտնուում։ Դա չատ քիչ է և անհիմն է Մ. Աթոռի անուան հետ չկապել այդ գործը։

Կարծում ենք, որ բոլոր գործոնները մեզ հետ կը ձայնակցեն, որ ինչպէս և լինի գործը պէտք է և անհրաժեշտ է կապել Ս. Էջմիածնի և ոչ մի այլ որև է տեղի հետ։

ԿՈՑՍ Հ. ԹԱՑԻՐԵԱՆԻ ՆՈՒԷՐը

Առաջիկայ Միւռոնօրհնութեան առիթով բարեպաշտուհի կոյս Հռիփսիմէ Թայիրեանը իւր սեպհական ծախքով պատրաստել է տուել մի չքնաղագործ և ոսկէնկար Հայրապետական մեծադիր քող, որ եկեղեցական նշանաւոր հանդէսների ժամանակ տանում են ամենայն Հայոց կաթուղիկոսի առաջ։

ՆԵՐՍԻՍԵԱՆ ԴՊՐՈՑԻ ՏԵՍՉԻ ԽՆԴԻՐ

ՄԿՐՏԻՉ ծառայ Յիսուսի Քրիստոսի և անհասանելի կամօքն Աստուծոյ եպիսկոպոսապետ և կաթուղիկոս ամենայն Հայոց ծայրագոյն Պատրիարք համազգական նախամեծար Աթոռոյ Արարատեան առաքելական Մայր եկեղեցւոյ սրբոյ Էջմիածնի. Գերաշնորհ Տէր-Գէորգ

Ս. Արքեպիսկոպոսի Առաջնորդի թէմին Վրաստանի և Իմէրէթի, հարազատի Մայր Աթոռոյ ողջունիւ յայտ առնեմք։

Քաջայայտ է Ձեր Սրբազնութեան, որ անցեալ տարիներում ես արձակած էի Ներսիսեան դպրանոցի Տեսուչ Բալաղեանցին. բայց յարգելի հոգաբարձութիւն թախանձագին կերպով խնդրեց, որ գոնէ մի տարի ևս թողում իւր պաշտօնի մէջ. բայց այժմ կրկին կոնդակով յայտնում եմ Ձեր սրբազնութեան, որ յիշեալ տեսուչ բացարձակ կերպով արձակուած է իւր պաշտօնէն կրկին կոնդակով զնոյն առաջինն հաստատելով։ Սոյն պատուէրս ամենայն ճշտութեամբ պէտք ի կատար ածէք, և անմիջապէս ձեռնարկէք նոր Տեսչի ընտրութեան։ Ես նոյն իրաւունք Ձեզ և պատուարժան հոգաբարձութեան կթողում որ ամենայն համերաշխութեամբ ընտրէք Ձեր Տեսուչ զով և կամիք թէ եկեղեցական դասէն և թէ աշխարհական։ Այս կարգադրութիւնս առ ժամապէս է ըստ կանոնին, որովհետև մտադրութիւն ունիմ նոր կանոնադրութիւն կազմել բոլոր մեր ազգային դպրանոցներուն համար համակերպ և միօրինակ ըստ պահանջման ժամանակին։

ՄԿՐՏԻՉ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

Ի 5 Յունիսի 1903 ամի
և ըստ Տոմարիս Ռ. Յ. Ծ. Բ.
Ի Հայրապետութեան Մերում Ժ. ամի
Արարատեան Մայր Աթոռս ս. Էջմիածնի
Ի Վաղարշապատ
Թ. 733

Տեսուչ պ. ս. Բալաղեանը հոգաբարձութեան ամսոյս 11-ի ժողովում արձակուեցաւ պաշտօնից և եօթնամեայ ծառայութեան համար տրուեցաւ նորան նուէր 2000 ռուբլի։

Տ. ՏԻՐԱՑՐ ՎԱՐԴԱՊԵՏ

Վեհափառ Հայրապետի հրամանով և թեմիս բարձր. սրբազան Առաջնորդի առաջադրութեամբ բարձր. Տ. Տիրայր վարդապետը նշանակուած է Թիֆլիզի ս. Սարգիս վանքի վանահայր, կառավարիչ Մայր Աթոռի Տփխիսում գտնուած կալուածների և կլոնսիստորիայի նախանդամ բարձր. Տ. Արսէն վարդապետի տեղ, որ հիւանդութեան պատճառով մեկնում է արտասահման։